ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАНА

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 75

«2» 07 2015թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասով, Ձեզ ենք ներկայացնում՝ Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 30 հունիսի 2015թվականի կայացած թիվ 2/2 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 9թերթ

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 2/2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 19 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

19.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30 -Ի, ԹԻՎ 2/2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

20.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

21.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

22.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՄՐԳԱՍՏԱՆԻ Գ/Պ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2015 թվականի թիվ 19

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 30-ի, թիվ 2/2 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական հունիսի 30
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2015 թվական թիվ 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 69-րդ հոդվածի առաջին պարբերությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2015թվականի երկրորդ եռամսյակի բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում բյուջեի ընթացքի մասին հաղորդումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Մրգաստան համայնքի ղեկավարի հաղորդումը, 2015 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ Օդեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական հունիսի 30
գ. Մրգաստան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հ. Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ՀՈՒՆԻՍԻ 30-Ի
ԹԻՎ 2/2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 20 ՈՐՈՇՈՒՄ

# Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԲՅՈՒՋԵՅԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Հարգելի ավագանու անդամներ և համայնքի բնակիչներ, Ձեզ եմ ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքում 2015թ. երկրորդ եռամսյակում բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումը, բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինձ ընձեռնված լիազորություններով.

Իմ կողմից ապահովվել է գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը: Իմ հանձնարարությամբ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից կատարվել է հետևյալ աշխատանքները`

Կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն` համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի և ավագանու անդամների մոտ:Ընդունելության եկած քաղաքացիների դիմումներին և բանավոր հարցադրումներին իմ և ավագանու անդամների, ինչպես նաև աշխատակազմի քարտուղարի կողմից տրվել է սպառիչ պատասխան` սահմանված ժամկետներում:

Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով, իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր լիազորություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ իրավասության սահմաններում օրենքով սահմանված կարգով հրավիրվել և վարվել է ավագանու 4 նիստ, որից 2-ը արտահերթ, 2-ը հերթական:

Աղբահանության գծով իրականացվել են աշխատանքներ:Ըստ ծրագրի հավաքագրվել և մուծվել է 25 000 /քսանհինգ հազար/ դրամ աղբահանության վճար:

Համայնքում կատարվում է աղբահանություն, շաբաթական երեք օր:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից վերահսկվել է հարկերի և տուրքերի հավաքագրման աշխատանքները.

Հողի հարկը երկրորդ եռամսյակի կտրվածքով 1000 000 /մեկ միլիոն/ դրամի դիմաց, հավաքագրվել է` 490 900 /չորս հարյուր իննսուն հազար ինը հարյուր/ դրամ:

Գույքահարկ շենք շինությունների համար նախատեսված` 50 000 /հիսուն հազար/ դրամի դիմաց կատարվել է հավաքագրում` 13 100 /տասներեք հազար հարյուր/ դրամ:

Փոխադրամիջոցի գույքահարկի համար 1000 000 /մեկ միլիոն/ դրամի դիմաց, հավաքագրվել է` 975 470 /ինը հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր յոթանասուն/ դրամ:

Տեղական տուրքերի համար 20 000 /քսան հազար /դրամի դիմաց, հավաքագրում չի կատարվել: Վարձակալական հողերի համար 100 000 /հարյուր հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է` 10 500 /տաս հազար հինգ հարյուր/ դրամ:

Երկրորդ եռամսյակում ցածր հավաքագրումը պայմանավորված է նրանով, որ գյուղում դեռ չի հասունացել բերքը և գյուղացին դեռևս իր արտադրանքը չի վաճառում:

Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ:

Երկրորդ եռամսյակի ընթացքում ընդունելության եկած 4 բնակիչներից, երեքը դիմել են այլ բնույթի հարցերով, որը բավարարվել է:Չորրորդ բնակիչը` Լուսինե Այդինյանի հարցը բավարարվել և տրվել է անհրաժեշտ փաստաթղթեր ԿԱՊՏ ներկայացնելու համար:

Հողօգտագործման բնագավառում՝
Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:
Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:
Կրթության և մշակույթի բնագավառում՝
Իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը:Գյուղի դպրոցում իրականցվող միջոցառումները արժանանում է գյուղապետարանի աջակցությանը: «Վերջին զանգի» միջոցառման համար գյուղապետարանի կողմից հատկացվել է՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
Կազմակերպվել է նաև մայիսի 9-ի, մայիսի 28-ի միջոցառումներ նվիրված Հայրենական պատերազմի 70-ամյակին, որի համար հատկացվել է՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:
Հատկացվել է՝ սոց օգնություն 380 000 /երեք հարյուր ութսուն հազար/ դրամ:
Այսքանը երկրորդ եռամսյակի ընթացքում, բյուջեի կատարման ընթացքի մասին:
Աշխատակազմը ամեն ինչ անում է, որպեսզի հավաքագրումները բարձրացնի պատշաճ մակարդակի:

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2015 թվական թիվ 21

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 23 հոկտեմբերի 2000թվականի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին», թիվ 656 որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 29 մայիսի 2015 թվականի թիվ 01/11/1769-15 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հողերի ընթացիկ հաշվառմանը և հողային հաշվեկշիռին համաձայն հավելվածի:
2.Հաշվեկշիռը ներկայացնել՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանում հաստատման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական հունիսի 30
գ. Մրգաստան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Ձև 22ա

## Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների)

առ 01.07.2015թվական

Մարզ՝ Արմավիր 4
(անվանում) (կոդ)

Համայնք՝ Մրգաստան 292
(անվանում) (կոդ)

| NN | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակություն. հողատեսք | կոդ NN | Ընդամենը ոռոգվող հողեր (2+3+4+5+6) | սեփականության սուբյեկտ: ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | համայնքային | պետական | Օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1,1, | 1.Գյուղատնտեսական | վարելահող | | 139. 0 | 126,4 | | 12,6 | | |
| 1.2, | | բազմ.տնկ.ընդամ | | 8. 0 | 8. 0 | | | | |
| 1,2,1 | | այդ թվում՝ պտղ այգի | | 5,4 | 5,4 | | | | |
| 1,2,2 | | խաղողի այգի | | 2,6 | 2,6 | | | | |
| 1,2,3 | | այլ | | | | | | | |
| 1,3 | | խոտհարկ | | | | | | | |
| 1,4 | | արոտ | | | | | | | |
| 1,5 | | այլ հողատեսքեր | | | | | | | |
| 1 | | Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5) | | 147. 0 | 134,4 | | 12,6 | | |
| 2,1 | 2.Բնակավայրերի | բնակելի կառույց | | 56,6 | 56,6 | | | | |
| 2,1,1 | | այդ թվում՝ տնամերձ հողեր | | 56,6 | 56,6 | | | | |
| 2,1,2 | | այգեգործական(ամառ -ն) | | | | | | | |
| 2,2 | | ընդհանուր օգտագործման | | | | | | | |
| 2,3 | | այլ հողեր | | | | | | | |
| 2 | | Ընդամենը (2. 1+2+2+2.3) | | 56,6 | 56,6 | | | | |
| 3.. | 3.Արդյունաբ., ընդերքօգտ.,և այլ արտ. նշանակության | | | | | | | | |
| 4.. | 4. Էներգետիկայի, տրանսպ. կապի, կոմունալ ենթակառուցվածքների | | | | | | | | |
| 5.. | 5. Հատուկ պահպանվող տարածքների | | | | | | | | |
| 6.. | 6. Հատուկ նշանակության | | | | | | | | |
| 7,1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | |
| 7,2 | | թփուտ | | | | | | | |
| 7,3 | | վարելահող | | | | | | | |
| 7,4 | | խոտհարկ | | | | | | | |
| 7,5 | | արոտ | | | | | | | |
| 7,6 | | այլ հողեր | | | | | | | |
| 7 | | Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6) | | | | | | | |
| 8 | 8.Ջրային | | | | | | | | |
| 9 | 9.Պահուստային | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+9) | | | | 203,6 | 191.0 | | 12,6 | | |

Մրգաստան համայնքի ղեկավար Ռ Խաչատրյան ______________ /ստորագրություն/

ԱԳ կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման ղեկավար՝ Կ. Մանուկյան ______________ /ստորագրություն/

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև N 22

*հողային ֆոնդի առկայության և բաշխման*

*(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների)*

առ 01.07.2015թվականի

Մարզ: Արմավիր (անվանում) — 4 (կոդ*)

Համայնք՝ Մրգաստան (անվանում) — 292 (կոդ*)

(հեկտարներով)

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը (2+3+4+8+12) | սեփականության սուբյեկտ: ՔՔ քաղաքացիների | ՔՔ իրավաբանական անձանց | համայնքային: Ընդամենը (5+6+7) | տրված մշտական օգտագործման | տրված վարձակալության | չտրված վարձակալության և օգտագործման | պետական: Ընդամենը (9+10+11) | տրված մշտական օգտագործման | տրված վարձակալության | չտրված վարձակալության և օգտագործման | Օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և ՀՀ - ում ... |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1,1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 138.99 | 126, 40 | | 12,59 | | 5,44 | 7,15 | | | | | |
| 1,2 | | բազմ.տնկ.ընդամ | | 8,02 | 8,02 | | | | | | | | | | |
| 1,2,1 | | այդ թվում՝ պտղ այգի | | 5,44 | 5,44 | | | | | | | | | | |
| 1,2,2 | | խաղողի այգի | | 2,58 | 2,58 | | | | | | | | | | |
| 1,2,3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1,3 | | խոտհարկ | | | | | | | | | | | | | |
| 1,4 | | արոտ | | | | | | | | | | | | | |
| 1,5 | | այլ հողատեսքեր | | 58,12 | | | 58,12 | | | 58,12 | | | | | |
| 1 | | Ընդամենը | | 205,13 | 134,42 | | 70,71 | | 5,44 | 65,27 | | | | | |
| 2,1 | 2. Բնակավայրերի | բնակելի կառույց | | 60,43 | 60,43 | | | | | | | | | | |
| 2,1,1 | | այդ թվում՝ տնամերձ | | 60,43 | 60,43 | | | | | | | | | | |
| 2,1,2 | | այգեգ-ն (ամառ -ն) | | | | | | | | | | | | | |
| 2,2 | | հասարակ կառույց | | 1,06 | 0,03 | | 0,63 | | | 0,63 | 0, 40 | | | 0, 40 | |
| 2,3 | | խառը կառուցապատ | | | | | | | | | | | | | |
| 2,4 | | ընդհ օգտագործ | | 12,15 | | | 12,15 | | | 12,15 | | | | | |
| 2,5 | | այլ հողեր | | 0,23 | | | 0,23 | | | 0,23 | | | | | |
| 2 | | ընդամենը | | 73.87 | 60,46 | | 13,01 | | | 13,01 | 0, 40 | | | 0, 40 | |
| 3,1 | 3.Արդյունաբ. ընդերքօգտ. | արդյունաբ | | | | | | | | | | | | | |
| 3,2 | | գյուղատնտեսական | | 8,92 | 0. 50 | | 8,42 | | | 8,42 | | | | | |
| 3,3 | | պահեստների | | | | | | | | | | | | | |
| 3,4 | | ընդերք օգտագոր | | | | | | | | | | | | | |
| 3 | | Ընդամենը | | 8,92 | 0. 50 | | 8,42 | | | 8,42 | | | | | |
| 4,1 | 4. էներգետիկայի, կապի, տրանսպորտի | էներգետիկայի | | 0,07 | | | 0,07 | | | 0,07 | | | | | |
| 4,2 | | կապի | | | | | | | | | | | | | |
| 4,3 | | տրանսպորտի | | 3,03 | | | | | | | 3,03 | | | 3,03 | |
| 4,4 | | կոմուն ենթակառ | | | | | | | | | | | | | |
| 4 | | Ընդամենը | | 3,10 | | | 0,07 | | | 0,07 | 3,03 | | | 3,03 | |
| 5,1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպան | | | | | | | | | | | | | |
| 5,1,1 | | այդ թվում՝ արգելոց | | | | | | | | | | | | | |
| 5,1,2 | | արգելավայրեր | | | | | | | | | | | | | |
| 5,1,3 | | ազգային պարկ | | | | | | | | | | | | | |
| 5,2 | | առողջարարակ | | | | | | | | | | | | | |
| 5,3 | | հանգստի | | | | | | | | | | | | | |
| 5,4 | | պատմ և մշակույթ | | 2,52 | | | 2,52 | | | 2,52 | | | | | |
| 5 | | Ընդամենը | | 2,52 | | | 2,52 | | | 2,52 | | | | | |
| 6 | 6.Հատուկ | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| 7,1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | | | | | | | |
| 7,2 | | թփուտ | | | | | | | | | | | | | |
| 7,3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7,4 | | խոտհարկ | | | | | | | | | | | | | |
| 7,5 | | արոտ | | | | | | | | | | | | | |
| 7,6 | | այլ հողեր | | | | | | | | | | | | | |
| 7 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| 8,1 | 8. Ջրային | գետեր | | 1,69 | | | | | | | 1,69 | | | 1,69 | |
| 8,2 | | ջրամբարներ | | | | | | | | | | | | | |
| 8,3 | | լճեր | | | | | | | | | | | | | |
| 8,4 | | ջրանցքներ | | 1,43 | | | 1,43 | | | 1,43 | | | | | |
| 8,5 | | հիդ. և ջր. այլ օբ | | | | | | | | | | | | | |
| 8 | | Ընդամենը | | 3,12 | | | 1,43 | | | 1,43 | 1,69 | | | 1,69 | |
| 9,1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9,2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9,3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9,4 | | | | | | | | | | | | | | | |
| 9,5 | | այլ անօգտագործելի | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9) | | | | 296,66 | 195,38 | | 96,16 | | 5,44 | 90,72 | 5,12 | | | 5,12 | |

Մրգաստան համայնքի ղեկավար
Ռ. Խաչատրյան ____________
/ստորագրություն/

ԱԿ կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման ղեկավար՝ Կ. Սանոսյան ____________
/ստորագրություն/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

## ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2015 թվական թիվ 22

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ սոցիալապես անապահով ընտանիքներին, դրամական աջակցություն ցուցաբերելու մասին.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սարգիս Հրանտի Ասատրյանին բուժման գնալու նպատակով հատկացնել՝ 60 000 /վաթսուն հազար/ դրամ:
2.Ստյոպա Սարիբեկի Վարդանյանին որդուն հետվիրահատական բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 40 000 /քառասուն հազար/ դրամ:
3.Խաչիկ Սամվելի Ավագյանին բուժման գնալու նպատակով հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5 կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ս. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական հունիսի 30
գ. Մրգաստան